

# ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆ. ՀԱՅԿԱԶՈՒՆ ՍՐԲԵՐԻ ՀԵՏՔԵՐՈՎ

«Ալիշանն իր գործունեությամբ դարձել է հայ

ժողովրդագիտության նախակարապետներից մեկը»:

*Սարգիս Հարությունյան*

1848-1849 թթ. Ավստրիական բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, որն ընդգրկել էր գրեթե ողջ կենտրոնական Եվրոպան, հասավ նաև Իտալիա. ավստրիացիների նահանջող բանակը մինչև 1849 թ. օգոստոսի 24-ը պաշարել էր Վենետիկյան հանրապետությունը և թշնամու բանակի ռումբերը թափվում էին Վենետիկի հրաշակերտ պալատների վրա<sup>1</sup>: Տեսնելով, որ վտանգը սաստկանում է, Հայր Ալիշանը Ռաֆայելյան վարժարանի մի խումբ աշակերտների հետ, փոքրիկ մակույկով նավարկվում են դեպի ս. Ղազար կղզի (անկասկած, Աստծո Աջը նրանց պահապան էր, քանզի անմիջապես նավակի կողքին պայթում է թշնամու արձակած ռումբը և նրանք հրաշքով են փրկվում):<sup>2</sup> Շուրջ մեկ ամիս վանքում մնալուց հետո պատերազմն ավարտվում է և Հ. Ալիշանն իր աշակերտներով<sup>3</sup> վերադառնում է վարժարան, լրացնելով ուսման ընթացքը: Ուղիղ մեկ տարի անց, 1850 օգոստոսի 29-ին պարգևաբաշխության հանդեսի ավարտից հետո, Հայր Քաջունու<sup>4</sup> ուղեկցությամբ, այդ շրջանավարտները պետք է վերադառնային հայրենիք՝ Կ. Պոլիս, մինչդեռ վանական ժողովի որոշմամբ շրջանավարտներին «ուղեկցողի» պաշտոնն ի սկզբանե ստնձված էր

<sup>1</sup> Տե՛ս Водовозов В.В., Революции 1848 г., ЭСБЕ (Энциклопедический словарь Брокгауза и Ефрона в 86-и томах), т. XXVI, СПб, 1906, с. 440-444; Берти Дж. (Верти Джузеппе), Демократы и социалисты в период Рисорджименто, пер. с итал., М., изд. «Прогресс», 1965 г.

<sup>2</sup> Երեմեան Ա., Կենսագրիւթիւն Հ.Ղ.Մ. Ալիշան Վարդապետի, Վենետիկ, Ս. Ղազար, 1902, էջ 21:

<sup>3</sup> Հ. Ալիշանի Ռաֆայելյան վարժարանում տեսուչ լինելու տարիներին (1848-50 թթ.) առաջին շրջանավարտ աշակերտերն էին. Միքայել Երամեանը, Անտոն Փամփուքչեանը, Գէորգ Սամուէլեանը, Թովմաս Եսայեանը, Պողոս Գամազիկեանը, Տրդատ Զոհրապետը, Պողոս Ճէպէճեանը, Միքայել Աղատեանը, Պողոս Զաղճեանը, Գէորգ Սամանճեանը, Պոլիկարպոս Սարգդեանը, Օրբահամ Պինսոնը և Մաթթէոս Մաճառը (տե՛ս. «Բազմավէպ», 1850, N 18, էջ 274):

<sup>4</sup> Քաջունի Մանուել (1823 Կ. Պոլիս – 1903 Կ. Պոլիս, թաղված է Վենետիկի Ս. Ղազար կղզում), խոշոր մանկավարժ, գիտնական, պատկերազարդ հանրագիտարան-բառարանի հեղինակ (հ. 1-3, 1891-93 թթ.): Ս. Ղազար կղզում հիմնել է ֆիզիկայի ուսումնական լաբորատորիա, ստեղծել է մաթեմատիկայի, ֆիզիկայի, քիմիայի, մեխանիկայի դասագրքեր: Առաջարկել է քիմիական նյութերի անվանակարգման սեփական եղանակ, մշակել և շրջանառության մեջ է դրել բազմաթիվ հայերեն գիտական տերմիններ: 1903-ին ընտրվել է Վենետիկի միաբանության թագադիր արքա, պարգևատրվել է իտալական Ասպետական խաչով (տե՛ս. Ахвердян С., Сардарян Р., Мануэль Каджунни – армянский пропагандист естественных наук XIX в., «Տեղեկագիր» (ֆիզիկա), ՀՍՍՀ ԳԱ, 1977, N 12):

Հ. Ալիշանին<sup>5</sup>: Ավաղ, հայրենիք նա այդպես էլ չի վերադառնա, նրան երբևիցե չի հաջողվի տեսնել իր պաշտելի Մասիսը և նրա ոտքը չի տրորի Հայոց հողը...

Առջևում մեծ առաքելություն էր. Հայկազուն սրբերի հետքերով ճամփորդություն դեպի Եվրոպա: Վենետիկից Հ. Ալիշանը մեկնեց 1850-ի սեպտեմբերի 1-ին և առաջին քաղաքը Անկոնան էր<sup>6</sup>. քաղաքի Մայր տաճարում, Սբ. Կիրակոսի (San. Cyriacus, Св. Иуда Кириак)<sup>7</sup> բազիլիկայի ստորգետնյա ծածկանցքում, Սբ. Կիրակոսի մասունքների տապանակի ձախ կողմում, ամփոփված էին Հայկազուն Սուրբ Լիբերիոսի (San Liberio, Св. Ливерий)<sup>8</sup> նշխարները: Այնուհետև նույն բազիլիկայում այցելում է Հռիփսիմեանց հայ միանձնուհիների մենաստանը:

Սեպտեմբերի 9-ն էր... 2 մղոն (≈ 3,3 կմ) հեռավորության վրա ուրվագծվում էր Հռոմը. ավելի ճիշտ՝ Վատիկանի Ս. Պետրոս տաճարի Միքելանջելոյի ստեղծած հոչակավոր գմբեթը: Նույն օրը Ալիշանը ներկայացավ Վեհին՝ Պիոս Թ Պապին (Պիյ IX). «Ղևոնդ» անունը լսելով, Պապը կրկնեց «Լէոն»<sup>9</sup>: Հ. Ալիշանի հոգու ցանկալի «հաճոյքներէն» մեկը, որը հաջողվեց ի կատար ածել՝ Ս. Պետրոս եկեղեցում պատարագելն էր: Վատիկանում նա քննեց տասը ձեռագիր, գտավ Հովհաննես

<sup>5</sup> Այդ օրերին ընտանիքը Պոլսից նրան գրել էր, որ նախատեսված ճամփորդությունը Ալիշանը հետաձգի (տե՛ս. Երեմեան Ա., նշվ. աղբ., էջ 23):

<sup>6</sup> Անկոնան (Ancóna) Իտալիայի Մարկե նահանգի վարչական շրջկենտրոնն է («ancon» հուն.՝ արմունկ, քաղաքը շրջապատող հրվանդանը արմունկաձև է): Քաղաքը հիմնադրել են հույները մ.թ.ա IV դ., ապա II դ. նվաճել է Հուլիոս Կեսարը, Ռուբիկոնն անցնելուն պես:

<sup>7</sup> XIII դ. հանրահայտ աշխատություններից մեկի՝ «Ոսկյա լեգենդի» («Legenda Aurea») համաձայն, Հեղինե կայսրուհուն Սուրբ Խաչի տեղը ցույց է տվել Հուդա Կիրակոսը (տե՛ս. Иаков Ворагинский, «Золотая легенда», глава LXVIII, Об обретении Святого Креста).

<sup>8</sup> Կաթոլիկ եկեղեցու տոնելի սուրբ՝ հայկազուն Լիբերիոսը, ծնվել էր Դվինում (կամ թե Սիս մայրաքաղաքում): Հայոց թագավոր Հեթումի որդին էր, որն ուխտի էր մեկնել Իտալիայի Անկոնա, որպես պանդուխտ ապրել Խաչակիրների մենաստանում, ապա առանձնացել Ս. Սեդրեստիոս անապատում. ճգնել և մահացել (510 թ.): Հայոց արքան, լսելով որդու մահը, դեսպաններ է ուղարկել և մարմինը պահանջել՝ արքայավայել հանդեսով Հայաստան փոխադրելու նպատակով, սակայն իտալացիք մարմինը դեսպաններին չեն հանձնել: Հետագայում, 996 թ-ին, քաղաքի Տրասոս (Трасоний II) եպիսկոպոսը, Հռոմի պապի վճռով, մեծ պատվով թաղել է Լիբերիոսին, վրան մեծ եկեղեցի կառուցել (XI դ.): Նա Անկոնա քաղաքի երկրորդ պահապան սուրբն է և ամեն տարի մայիսի 27-ին կատարվում է նրա մեծանադես տոնը (տե՛ս. Մեսրոպ վրդ. Ուղուրխան, Պատմութիւն հայ գրականութեան և Լիվոնոս քաղաքում նրանց եկեղեցու կառուցման մասին, Վենետիկ, 1891, էջ 218):

<sup>9</sup> **Լևոն** անունը (հուն. Λέων), որը նշանակում է «առյուծ», մեզանում գործածվել է դեռևս Ժ (X) դ-ից, զարգանալով հատկապես Կիլիկյան Հայաստանում՝ Ռուբինյանների ժամանակաշրջանում, իսկ նախքան այդ նույն անունը տառադարձված էր **Ղևոնդ**, երբ հայերեն «Ղ» տառը կորցրել էր իր բնիկ «Լ» հնչյունը (տե՛ս. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, այսուհետ՝ ՀԱԲ, հ. 2, էջ 408-409; հ. 3, էջ 140-141): Ալիշանի իրական անունը **Քերոսյան** էր. Մխիթարյան միաբանության վանքում մնալու նրա վերջնական որոշումը հաստատեց և նրա նոր անունը՝ **Քերոսյան Ալիշանյանը** դարձավ **Ղևոնդ Ալիշան**:

Ոսկեբերանի (IV դ.)<sup>10</sup> «պատկեր մը գլխուն» դիմանկարը. սրբի ձեռքում մի գրքույկ էր, իսկ վրան հայերեն այբուբենով՝ «Հայր մեր որ յերկինս...» գրությունն էր<sup>11</sup>: Այցելելով Վատիկանի մատենադարանը, Ալիշանը գտնում է 13 հայկական ընտիր գրչագիրներ և ընդօրինակում է այդ հիշատակարանները: Շուրջ մեկ ամիս գտնվելով Հռոմում և այցելելով պատմական հնության նշանավոր գրեթե բոլոր վայրերը, Հ. Ալիշանն առանձին հետաքրքրությամբ փնտրում է հայ ձեռագրեր:

Հաջորդ ճամփորդությունը դեպի **Մանտուա** էր (1851 հոկտեմբերի 8-ին) և նպատակը մեկն էր՝ տեղեկություն առնել Ս. Սիմեոն Հայկազնի<sup>12</sup> մասին: Մանտուայի Մայր եկեղեցում, ինչպես նաև Հասարակաց գրատանը, հազարավոր գրքերի և մատյանների մեջ Ալիշանը գտավ ընդամենը մեկ գրչագրած ձեռագիր, լատին հեղինակ՝ Արմաքանոսի մատյանը: Նա շարունակում է որոնումները<sup>13</sup>. «Հոկտ. 10-ին Մանթուայէն 12 մղոն հեռաւորութեամբ Ս. Բենեդիկտոս ասանն կ'ուղեւորի, հոն կը գտնէ Ս. Բենեդիկտոսի և Ս. Հայկազուն Սիմէովնի տաճարը. մեծ զմայլանքով կը դիտէ Հայ Սուրբին նուիրական խորանը»<sup>14</sup>: Բենեդիկտյան արքայության առաջին եկեղեցին կառուցվել է ի հիշատակ Սիմեոն Հայկազունի, որը Մանտուա քաղաքի պահապան սուրբն է և ինչպես Լիբերիոսը՝ կաթոլիկ եկեղեցու սրբերի շարքին է դասված: Առ այսօր պահպանվում է նրա գերեզմանը, ինչպես նաև հայերեն Ավետարանն ու Սաղմոսը, որոնք իր հետ Հայաստանից բերել էր Սիմեոնը: Հայ սրբի վերաբերյալ լատիներեն մի

<sup>10</sup> Հովհան (Հովհաննես) Ոսկեբերան (350-407 թթ.)՝ խոշոր հոգևորական գործիչ, հունական եկեղեցական պերճախոսության ներկայացուցիչ: Վարելով ճգնավորի կյանք և ներբողական ճառեր նվիրելով անապատական ապրելաձևին, Ոսկեբերանը սուր քննադատում էր բյուզանդական իշխանության իշխող դասակարգի բարքերը, որի համար 403 թ-ին աքսորվել է Կ. Պոլիս, սակայն ժողովրդական հուզմունքներից խուսափելով, ետ է վերադարձվել: Մահացել է Կոմանայի մոտ՝ հաջորդ աքսորավայրի ճանապարհին, աճյունը 438-ին տեղափոխվել է Կ. Պոլիս և ամփոփվել Ս. Առաքելոց Մայր տաճարում (տե՛ս. Հատինյան Ա., Սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետ Անտիոքցի, «Էջմիածին», 1977, N 12):

<sup>11</sup> Երեմեան Ս., նշվ. աղբ., էջ 26:

<sup>12</sup> Հայկազուն Սիմեոն Սքանչելագործը հայ նախարարի որդի էր, ծնվել էր Արշամուշատ քաղաքում, շուրջ 956 թ-ին: Ծնողների կամքին հակառակ, սեփական հարսանիքից զաղտնի փախնում է (986 թ.) և դառնում է կրոնավոր, առանձին ճգնում: Գնում է Երուսաղեմ ուխտի, այնուհետև Հռոմ, ապա և Տոսկանա, Պիզա, Լուկկա, Միլան, Պավիա, Իսպանիա, Բրիտանիա, Գաղղիա (Ֆրանսիա), ամեն տեղ հրաշքներ գործում: Վերջնական հաստատվելով Իտալիայի (Լոմբարդիա) Մանտուա քաղաքի Բենեդիկտեանց վանքում (գ.Պոլիորոնե) 1013 թ. և 13 տարի ապրելուց հետո, մահանում է 1026 թ. (տե՛ս. Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց: Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1874; հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 860-865; նաև՝ Աճառյան Հ., ՀԱԲ, հ. 4, էջ 498):

<sup>13</sup> Երեմեան Ս., նշվ. աղբ., էջ 34:

<sup>14</sup> Այդ հանրահայտ խորանի մի մասը 1560 թ. նկարագարդել է հոչակավոր Պաոլո վերոնեզեն (L'Abbazia di San Benedetto in Polirone. [www.aziendaterrredelpo.it/rus/|Monastero I T.htm](http://www.aziendaterrredelpo.it/rus/|Monastero I T.htm)):

քանի գրություններ գտնելով<sup>15</sup> և հրաշագործ նշխարքն առնելով, Ալիշանը վերադարձավ Վենետիկ:

1851 թ. դեկտեմբերի 5-ին միաբանության վարչական ժողովի որոշմամբ Ալիշանը հատուկ հանձնարարականով պետք է ուղևորվեր Լոնդոն («ի Լոնտրա»): Վենետիկում, Ռաֆայելյան վարժարանի<sup>16</sup> համար վարձած առաջին շենքը՝ Պեզարո պալատը<sup>17</sup> հետագա շահագործման համար նպատակահարմար չէր (շենքը չուներ ներքին պարտեզ, սեփականատերն էլ ամեն տարի բարձրացնում էր վարձը): Որոշված նոր շենքը՝ Զենոբիոյի պալատն էր<sup>18</sup>, որը ներքին կողմից ուներ աշակարտների համար անհրաժեշտ ընդարձակ այգի: Վանքի վարչությունն ի օգուտ կրթական հաստատության, շենքը վարձելու փոխարեն որոշեց այն գնել. բավարար գումար ձեռք բերելու նպատակով Հայր Ալիշանը 1852 թ. հունվարի 18-ին մեկնեց Լոնդոն:

<sup>15</sup> Ռաֆայել Հուստինենոս անունով մի կրոնավոր 1477 թ-ին հրատարակել է 1000 տողանի լատիներեն մի տաղ, ուր տալիս է այդ սրբի պատմությունը, միանգամայն և Հայաստանի գովեստը (տե՛ս. Աճառյան Հ., ՀԱԲ, հ. 4, էջ 98):

<sup>16</sup> Ռաֆայելյան վարժարանը հիմնադրվել է 1836-ին Վենետիկում, Մխիթարյան Միաբանության նախաձեռնությամբ, մադրասահայ հարուստ մեկենաս Էդվարդ-Ռաֆայել Ղարամյանի միջոցներով: Է.-Ռ. Ղարամյանն իր ժամանակի զարգացած և եվրոպական կրթություն ստացած մարդկանցից էր, որին մշտապես մտատանջում էին հայ երեխաների կրթության և դաստիարակության խնդիրները: Նրա ավագ դուստր՝ Աննան ամուսնանում է մադրասահայ մեկ ուրիշ մեծահարուստ Սամուել Մուրադյանի հետ՝ ապագա Մուրադյան վարժարանի հիմնադիրը (տե՛ս տողատակ 25): Տեսնելով փեսայի՝ Սամուելի, առևտրական ունակությունները, նրան դարձնում է իր ունեցվածքի գործակալն ու կտակարարը: Դստեր ամուսնությունից հետո Ռաֆայելը մեկնում է Լոնդոն, որտեղ և կարճ ժամանակ անց մահանում է: Մահից մեկ տարի առաջ Ռ. Ղարամյանը գրում է կտակ-պատվիրան՝ մեծ հարստություն թողնելով հայ դպրոցի հիմնադրման գործին: Նա ցանկություն էր հայտնել կտակն իրագործել անգլիական օրենքի համաձայն և միևնույն ժամանակ հորդորել զավակներին, որ «վեճեր չհարուցանեն, այլ իրենց ունեցվածքին 5 առ 100-ը տան»: Իմանալով աներոջ մահը, Սամուելը որոշում է իրագործել նրա կտակը, սակայն ժառանգորդներն ընդդիմանում են և փեսայի ջանքերն ապարդյուն են անցնում: Միայն 16 տարի անց, հաղթահարելով մի շարք դժվարություններ, մխիթարյանական Սարգիս Թեոդորյանը, անգլիական դատարանի միջոցով ապահովեց կտակով նախատեսված դրամի վերադարձը (տե՛ս. Դավթյան Ռ., Սամուել Մուրադյանը և նրա անվան վարժարանը // Սփյուռքահայ կրթական օջախներ և գործիչներ, Լրաբեր, 1990, N 9, էջ 65-73):

<sup>17</sup> Կա Պեզարո պալատը (Palazzo Ca'Pesaro) կառուցվել էր XVII դ. կեսերին և պատկանում էր Պեզարո ընտանիքին: Այդ ժամանակահատվածում իշխող դասակարգի հարուստ ընտանիքները կառուցում էին անվանական պալատներ, բայց քանի որ ի սկզբանե պալատը մեկն էր (Palazzo dei Dogi)՝ Դոժերի պալատը, ապա մյուս պալատները որոշեցին անվանափոխել «Ca» նախածանցով («casa» իտալ.՝ տուն), ինչպես հայտնի Ca'D'Ore, Ca'Foskari, Ca'Farsetti, Ca'Loredan տուն-պալատները: XIX դ. 30-ականներին Պեզարո ընտանիքի հսկայական ունեցվածքը գրեթե ամբողջովին կորցված էր (այդ թվում՝ մեծ քանակությամբ արվեստի բարձրարժեք կտավներ):

<sup>18</sup> Զենոբիոյի պալատը (Palazzo Ca' Zenobio) կառուցել էր Պետրոս Զենոբիոն՝ հարուստ հողատեր Վերոնից: Նրա վաստակն ու մատուցած ծառայությունները Վենետիկյան հանրապետության իշխանավորներին շատ մեծ էր, որի համար նրան շնորհել էին կոմսի տիտղոս և մեծ հողատարածքներ: Միաբանությունը որոշեց վարձակալել նրա կառուցած չորս պալատներից մեկը՝ Վենետիկի խաղաղ և բարեկարգ թաղամասերից մեկում:

Վենետիկում արդեն լույս էր տեսել Ալիշանի «Հայոց երգք ուսմակական» աշխատությունը, որը հայ միջնադարյան գուսանա-ժողովրդական և աշուղական երգերի անդրանիկ ժողովածուներից մեկն էր՝ դասական օրինակ հայ բանասիրության պատմության մեջ<sup>19</sup>: Այդ ժողովածուն նա կցում է իր նամակին, հասցեագրելով այն Լոնդոնի «Բարձրագույն դուան ընդհանուր խորհրդականին» և դիվանագետ Էդուարդ Չոհրապին<sup>20</sup>.

*«Ներկայացնելով բրիտանական հասարակությանը հայկական ժողովրդական երգերի հավաքածուի սույն հատորը<sup>21</sup>, մենք կարծում ենք, որ չէինք կարող այն նվիրել մի այլ անձնավորության, որը Ձեզնից ավելի արժանավոր լիներ. Ձեզ, որ մեր ազգի ամենանշանավոր ներկայացուցիչն է Մեծբրիտանիայի մայրաքաղաքում: Մեկը՝ որն իր դիվանագիտական բազում հոգսերի և դժվարությունների ընթացքում հանգիստ է գտնում մշակույթով զբաղվելով: Այն խոնարհ ակնածանքը, որը Դուք վայելում եք մեր միաբանության անդամների կողմից, որոնք ժամանակ առ ժամանակ այցելում են Մեծբրիտանիա, մեզ հնարավորություն ընձեռնեց հրապարակավ ազդարարելու այդ բարեկամությունը, որը գոյություն ունի մեր միջև՝ այն ուժեղագույն զգացումը, որը կապում է նույն ազգի անդամներին օտար երկրում: Հիշյալ բարեկամությունն ու ակնածանքը, որը գոյություն ունի Ձեր նկատմամբ, անկասկած բաժանում են նաև անգլիացի մտավորականները, որոնք ուշադրությամբ և սիրով ընդունում են մեր այս փոքրիկ աշխատությունը:*

*Լոնդոն, 22 օգոստոսի, 1852 թ.*

*Հ[այր] Ղևոնդ Ալիշան»<sup>22</sup>:*

Մինչ «դրամասեղանատանից» կհամաձայնվեին այդքան մեծ գումար տրամադրել, Ալիշանն անընդմեջ մտորումների մեջ էր. գործին կարգադիր անձիք որոշակի պատասխան չէին տալիս և խնդրի լուծումը պարբերաբար հետաձգում էին: Անդադար այդ ուղղությամբ աշխատելով և մտախոհության մեջ ընկնելով, Ալիշանն այնքան է սրտնեղվում, որ հյուծված և ուժաթափ եղած, բարձր ջերմությամբ ընկնում է անկողին: Այդպիսի օրերից մեկում, երբ նա զբոսնում էր Քրիստոսի անվան

<sup>19</sup> Ժողովածուում Ալիշանն ամփոփել էր Վենետիկի, Վիեննայի, Փարիզի, Լոնդոնի մատենագրություններում պահվող հայ միջնադարյան ձեռագրերից անձամբ քաղած և XIX դ. բանավոր ավանդույթից վկայած շուրջ երկու տասնյակ ժողովրդական երգեր, որոնք դրվեցին ազգային և միջազգային լայն շրջանառության մեջ՝ իր իսկ կատարած անգլերեն թարգմանություններով (տե՛ս. Սարգիս Յարութիւնեան, Ղևոնդ Ալիշանը եւ հայոց երգերն ու հավատալիքները // «Բազմավէպ», 1-4, Վենետիկ, Ս. Ղազար, 2001, էջ 233-241):

<sup>20</sup> Չոհրապ Էդվարդ՝ 1838-41 թթ. Լոնդոնում Օսմանյան կայսրության գլխավոր դեսպանն է եղել (տե՛ս. Ստեփանյան Հ., Հայերը դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմում, մաս VIII // [www.diplomat.am/](http://www.diplomat.am/) 22.10.2013):

<sup>21</sup> Տե՛ս. Ղ. Ալիշան, Հայոց երգք ուսմակական, Վենետիկ, Ս. Ղազար, 1852:

<sup>22</sup> Տե՛ս. Ղ. Ալիշան, Գրական ժառանգություն, նամակներ, հ. 5, «Ակադեմիա» հրատ., Երևան, 1969, էջ15:

վարժարանի պարտեզում, Միլթոնի<sup>23</sup> տնկած թթենիների ստվերում, մի տարօրինակ դեպք պատահեց Ալիշանի հետ: Նրան մոտեցավ մի անձանոթ, քաղաքավարությամբ ընկերանալով, ներկայացավ որպես Մասոնների ընկերության անդամ և անհրաժեշտ գումար տրամադրելու գործում առաջարկեց իր աջակցությունը, եթե Ալիշանը դառնա իրենց ընկերության անդամ. «Հ. Ալիշանի պես սրբակաց կրոնաւորը առանց այլայլելու կը պատասխանէ, որ ինքը ունի իր միաբանութեան գլուխը և իր յատուկ կրոնաւորական ընկերութիւնը»<sup>24</sup>: Արտաքնապես Հ. Ալիշանը չէր երևում որպես կրոնավոր կամ եկեղեցական, կրում էր աշխարհիկ զգեստ և կարճ սև մորուք, այնուամենայնիվ՝ քիչ հավանական է, որ «քաղաքավարի» անձանոթը նրան մեկ ուրիշի հետ շփոթած լիներ:

Ի վերջո, Մուրադ-Ռաֆայելյան<sup>25</sup> վարժարանի բարերարներից մեկի զարմիկի՝ փաստաբան Պ. Լուիզի աջակցությամբ, հաջողվեց ստանալ 125000 ֆրանկ (այսօր այդ

---

<sup>23</sup> Ջոն Միլթոնը (1608-1674) անգլիացի բանաստեղծ, մտածող և խոշոր քաղաքական գործիչ էր, որի ստեղծագործական ազդեցությունը եվրոպական պոեզիայի զարգացման վրա զգացվել է ընդհուպ մինչև XIX դ. կեսը: Բանտից և մահապատժից խույս տալով, Միլթոնը վարում էր մեկուսացված կյանք, իսկ կուրացումն առավել ծանրացրեց նրա առանց այդ էլ թշվառ վիճակը: Միլթոնի հայտնի գործերից են «Դրախտ կորուսյալ» (1667 թ.) և «Դրախտ վերադարձյալ» պոեմները (տե՛ս. Առաքելյան Հ., Միլտոն. նրա կյանքը և գրական գործունեությունը, Թիֆլիս, 1950):

<sup>24</sup> Երեմեան Ա., նշվ. աղբ., էջ 42:

<sup>25</sup> 1834 թ. Իտալիայի Պադուա (Padova) քաղաքում (Proto della Valle թաղամաս) Հնդկաստանի մեծահարուստ՝ Սամուէլ Մուրատյանի (ծնվ. Փոքր Ասիայի Եվրոկիա ք-ում, 1760-ին) կտակի համաձայն ստեղծվեց հայ կրթական առաջին օրրանը՝ **Մուրատեան վարժարանը**: Սամուէլ Մուրատյանը դժբախտաբար չտեսավ իր վարժարանը. անխոնջ հայրենասերը մահացավ 56 տարեկան հասակում՝ 1816 թ. ապրիլի 20-ին: Կտակում նշված էր. «Վենետիկի հայ միաբաններու խորհրդով և միջնորդությամբ հող գնեն Եվրոպայի որ կողմը, որ հարմար կդատեն անոնք, և կառուցանեն դպրատուն մը հայագգի մանուկների դաստիարակության» (տե՛ս. Մուրատեան վարժարան, Ս. Ղազար, Վենետիկ, 1975, էջ 8): Իր աներոջ՝ Ռաֆայել Ղարամյանի թողած կտակի իրականացման հետ կապված նրա ժառանգորդների հետ բազմաթիվ խնդիրներ ունենալուց հետո, Մուրատյանն իր առջև մի կարևոր նպատակ էր դրել. «Եթե Տերը յաջողություն տա իմ գործերուն, պիտի օգնեմ իմ Ազգին, և այնքան որքան ոչ ոք ըրած ըլլայ իր կենդանութեան» (վերը նշվ. աղբ., էջ 7): Նրա մահից միայն 17 տարի անց հնարավոր եղավ իրականացնել Մուրատյանի մեծ երազանքը: Նորաստեղծ վարժարանում սովորելու էին մեկնում առաջին հերթին Կ. Պոլսի հայ երեխաները (վարժարանի գործունեության առաջին շրջանը տևեց մինչև 1846 թ.): Ունենալով լիարժեք անկախություն, վարժարանի ղեկավարությունը ցանկանում էր ստեղծել հայկական համալսարան: Յավոք, փոխարենը ուրախանալու իրենց ծնողների նվիրական կամքը կատարելու և նրանց թողած կտակի շնորհիվ այդ վարժարանի Եվրոպայում բարգավաճելուն, նրանց որդիները՝ Ալեքսանդր Ղարամյանը և Հովհաննես Մուրատյանը, փորձեցին այն հանձնել ավստրիական իշխանությունների տնօրինությանը՝ միշտ նրանց հսկողության տակ գտնվելու պայմանով: Վարժարանը Իտալիայում պահելու ձեռնարկած բոլոր միջոցները ապարդյուն էին, և աբբահայր Սուքիաս Սոմայանը կատարում է մի վճռական քայլ. վարժարանը փոխադրել Ֆրանսիա: Ֆրանսիան, մեծ համակրանք ունենալով հայերի հանդեպ, 1846 թ. իր դռները բացեց հայոց վարժարանի առջև (ֆրանս-պրուսական պատերազմը որոշ ժամանակով փակեց վարժարանը և աշակերտները փոխադրվեցին Վենետիկ, ուսումը շարունակելու Ռաֆայելյան վարժարանում): Այդ ժամանակահատվածում վարժարանը կրել է «Մուրադ-Ռաֆայելյան» անունը:

գումարը կկազմեր ավելի քան 200 միլիոն եվրո), որն էլ ապահովեց վարժարանի նոր շենքը՝ Չենոբիոյի պալատի գնումը:

Լոնդոնում, այցելելով «Բարհամ Բարքի»<sup>26</sup> դղյակը, Հ. Ալիշանը ձեռագրերի գրադարանում գտնում է տասը հայ գրչագիրներ, ինչպես նաև 18 նորահայտ ձեռագիր մատյան Օքսֆորդի<sup>27</sup> համալսարանի մատենադարանում և հետաքրքրությամբ ուսումնասիրում այն: Այդ օրերին թարգմանում է նաև իր սիրելի բանաստեղծ՝ լորդ Բայրոնի «Childe Harold's Pilgrimage» («Չայլդ Հարոլդի ուխտագնացությունը») պոեմը:

Կարճաժամկետ վերադառնալով Վենետիկ, նույն 1852-ի օգոստոսի վերջին նա մեկնում է Փարիզ՝ վաղեմի հայոց ազգային արձանագրություններ, հայկական ձեռագրեր, շիրիմներ, սրբոց պաշտելի նշխարներ որոնելու<sup>28</sup>: Լուվրում նա տեսնում է «պարթեվազն» Տրդատի (Tiridatus)<sup>29</sup> հսկա արձանը՝ Prisonier Barbare (բանտարկված Բարբարոսը) մակագրությամբ<sup>30</sup>: Սեպտեմբերի 26-ին Ալիշանն ուղևորվում է Գենտ<sup>31</sup> («Կանտ» Ղ. Ա.)՝ պատմական Ֆլանդրիա, այցելելու հայկազուն սուրբ՝ Մակարի<sup>32</sup>

<sup>26</sup> Կարծում ենք, խոսքը Բուքինգհեմյան պալատի մասին է, որը գտնվում է կանաչապատ այգում («Բարք - Պարկ» Park՝ զբոսայգի), այգին հայտնի է Green Park (Կանաչ այգի) անվամբ: «Բարհամ (Պարհամ)» դղյակից և ոսկեզօծ դահլիճից ստացած տպավորությունների ներքո, այդ պատմական մեծ արժեք ունեցող հուշակոթողին Ալիշանը նվիրել է քերթողական ներբող (տե՛ս. Երեմեան Ս., նշվ. աղբ., էջ 42-44):

<sup>27</sup> Օքսֆորդի համալսարանի Բոդլեյան գրադարանում, որն աշխարհի հնագույն գրադարաններից է, պահվում են շուրջ 100-ից ավելի հայկական ձեռագրեր:

<sup>28</sup> Փարիզում Ալիշանն իրեն այդքան միայնակ չէր զգում, ինչպես «Ի Լոնտրա»՝ Լոնդոնում, քանզի այստեղ ուներ բազմաթիվ ընկերներ և վանքին հոգեկից եղբայրներ:

<sup>29</sup> Տրդատ Ա (ծնվ. 88 թ., այլ աղբյուրների համաձայն՝ 100 թ.) 52 թ-ից՝ Մեծ Հայքի թագավոր, Պարթևների Արշակունյաց տոհմից, Պարթևստանի և Ատրպատականի թագավորներ՝ Վաղարշ I-ի և Բակուրի կրտսեր եղբայրը: Մեծ Հայքն ազատագրելով հռոմեացի զավթիչներից՝ Արտաշատ մայրաքաղաքից վտարել է Հռոմի դրածո թագավոր վրացի՝ Հռադամիզդ Իբերիացուն: Հռոմեացի պատմագիր Պուբլիոս Կոռնելիոս Տակիտոսը հայտնում է, որ Հռադամիզդը, իր հղի կնոջ՝ գեղեցկուհի Չենոբիայի հետ փախուստի մատնվելով, վերջինիս սպանել է (հալածողների ձեռքն ընկնելը խայտառակություն համարելով՝ սրախողխող է արել սիրած կնոջը) և մարմինը գցել Արաքսը: Ծանր վիրավորված Չենոբիային ալիքները գցել են ափ, հայ հովիվները նրան խնամել և վերքերը բժշկել են, ապա տարել Տրդատի մոտ: Իրադարձությունների ժամանակակից, Տակիտոսի (58-117 թթ.) տեղեկությունների համաձայն՝ Տրդատը Չենոբիային մեծ պատվով պահել է Արտաշատում (Корнелий Тацит, Анналы, Книга XII, изд. «Ладомир», М., 1993, стр. 51) (տե՛ս. Լեո, Երկեր, հ. 1, Երևան, 1966, էջ 344): Այս պատմական իրադարձության շուրջ արվեստի բազմաթիվ կտավներ են ստեղծվել. Լ. Սաբատելիի, Ն. Պուսենի, Ա.-Գ. Բագրոյի նկարները, Հենդելի «Հռադամեստ» օպերան (Радамест, 1720), ինչպես նաև Ա. Գրիբոեդովի «Թողամիստ և Չենոբիա» անավարտ պիեսը:

<sup>30</sup> Տրդատ Ա Պարթևը գրադաշտական կրոնի հետևորդ էր (James R. Russell. Zoroastrianism in Armenia – Harvard University, 1987, p. 268):

<sup>31</sup> **Գենտը**, Գան (ֆրանս.՝ Gand, ֆլանդր. Gant) Բելգիայի նավահանգստային քաղաքներից է, Շելդա գետի ափին, որն արևելյան Ֆլանդրիայի վարչական կենտրոնն է: Գենտի համալսարանում 1905-1909 թթ.-ին սովորել է Դանիել Վարուժանը:

<sup>32</sup> Հայկազուն Մակարը՝ պատրիարք Անտիոքի, Միքայել անունով մի իշխանի որդին էր, որը եկեղեցականությամբ հետևելով իր հորեղբորը՝ Մակար եպիսկոպոս Անտիոքին ( գահավարել է մինչև

մասունքները, որոնք ամփոփված էին Ս.Բավոնի արքայության Մայր տաճարի խորաններից մեկում (capella)<sup>33</sup>:

Այնուհետև Հ. Ալիշանը «կերթայ Պրիքսելի<sup>34</sup> (Բրուսել – Մ.Տ.), կը տեղեկանայ, որ հոն ևս հայ սուրբի մը յիշատակը կը յարգուի, կ' իմանայ, որ օտարահնչակ Ս.Խրիստոլիոս անուամբ Հայկազն սուրբին գլուխը քաղքին մայր եկեղեցույ մէջ կը պահուի. կ'երթայ զայն տեսնելու, սակայն անկարելի կ'ըլլայ. ժողովրդապետը կը պատասխանէ թէ կնքուած է»<sup>35</sup>:

**Խրիստոլիոս** անունով սրբի հիշատակում հայկական աղբյուրներում մենք չկարողացանք գտնել: Ենթադրում ենք, որ այն հայերեն «ոսկի» բառի հունարեն տառադարձությունն է («խրիզոս» Χρυσός՝ ոսկի), ինչպես ունենք իգական Ոսկի, Ոսկեհատ, կամ արական Ոսկան, Օսկան, Ոսկևան անձնանունները (այստեղից էլ՝ Ոսկանյան, Օսկանյան ազգանունները)<sup>36</sup>: Հիշենք Թադևոս առաքյալի Ոսկեանց (Ոսկեանք) աշակերտներին. ազգությամբ «հռովմայեցի»՝ բնակվում էին Եփրատի ակունքի մոտ, նահատակվեցին Արտաշես Բ-ի օրոք 107 թ-ին<sup>37</sup>:

---

995 թ.), վերջինիս անունով է մկրտվել: Իր չորս ազգականների հետ (Յովհաննէս, Պետրոս, Դավիթ և Կոնստանդին) գնացել է Երուսաղեմ ուխտի, բռնվել և չարչարանքի է ենթարկվել (1000 թ.): Կարողացել է անցնել Եվրոպա, իբրև պարզ ճգնավոր շրջելով՝ հոչակվել է հրաշագործ: Եղել է Գերմանիայի Բավարիա և Մոզունտիա (ներկայումս Պլզեն՝ Չեխիա – Մ.Տ.) գավառները, մի տարի մնացել է Ֆլանդրիայի «Գանտալիո»՝ Գենտ (Մ.Տ.) վանքում, խնամելով ժանտախտով վարակվածներին, ինքն էլ է վարակվել և 1012 թ. մահացել: Մահվանից հետո այնքան հրաշքներ են կատարվել նրա գերեզմանի վրա, որ աճյունը 1067 թ. փոխադրել են առանձին խորան և դասել կաթոլիկ եկեղեցու սրբերի կարգը (տե՛ս. Չամչեանց Հ. Միքայել վրդ., Պատմութիւն Հայոց, գ. Բ, Վենետիկ, Ս. Ղազար, 1786, էջ 858-860):

<sup>33</sup> Բելգիայի Ս. Բավոնի մայր տաճարի տեղում X դ. գործել է Հովհաննէս Մկրտիչին նվիրված ծխական եկեղեցի, որի փայտյա մատուռն օծվել է 942 թ.-ին (մատուռն այսօր գետեղված է տաճարի դամբարանում): Եկեղեցին վերստին կառուցվել է XII դ. (ռոմանական ոճով), իսկ XV դ. վերակառուցվել գոթական ճարտարապետական ոճի համաձայն: Ս. Բավոնի տաճարը հայտնի է իր անկրկնելի խորանով (3,5 մ. բարձրությամբ և 5 մ. լայնությամբ), որի հեղինակներն են նիդերլանդական Վերածննդի հռչակավոր գեղանկարիչներ՝ Հուբերտ և Յան Վան Էյք (Van Eyck) եղբայրները: Ս. Բավոնի տաճարում մկրտվել է Հաբսբուրգների արքայատոհմի կայսեր՝ Իսպանիայի թագավոր Կառլ V (1500-1558):

<sup>34</sup> Ֆրանսերեն՝ Bruxelles, ֆլամանդերեն՝ Brussel:

<sup>35</sup> Երեմեան Ս., նշվ. աղբ., էջ 49:

<sup>36</sup> Տե՛ս. Աճառյան Հ., ՀԱԲ, հ. 4, Երևան, 1948, էջ 187-192:

<sup>37</sup> Թադևոս առաքյալի նահատակությունից հետո Ոսկեանները քաշվեցին Ծաղկավետ կոչված լեռները՝ Եփրատի ճյուղ կազմող Արածանիի ակունքների մոտ, և ապրեցին ճգնավորությամբ ու աղոթքներով: Վկայաբանության համաձայն, ավելի քան 40 տարիներ ճգնելուց հետո, նրանք լեռներից իջել են և Հայոց արքունիկին՝ Արտաշես թագավորին և Սաթենիկ թագուհուն Ավետարան քարոզել: Սաթենիկ թագուհու պալատականները, որոնք իր հետ եկած էին Ալանաց աշխարհից, թվով 17 հոգի՝ Սուքիասի գլխավորությամբ (Սուքիասանք), ընդունեցին քրիստոնեություն և մկրտվեցին Եփրատի ակունքներում (տե՛ս. Հայազգի սուրբեր, Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան, «Գանձասար» մատենաշար, Երևան, 1997, էջ 159-166): Տե՛ս նաև. Ղևոնդ Ալիշան, Արշալույս քրիստոնեության հայոց, Վենետիկ, 1920, էջ 61-73; Չամչեանց Հ., Միքայել վրդ., Պատմութիւն Հայոց, գիրք Ա, Վենետիկ, 1784, էջ 343:



Բրյուսելի Մայր տաճարի տարեգրությունը գլխատված հայկազուն սրբի մասին նույնպես տեղեկություն չի պահպանել, սակայն XV դ. բելգիական տեղեկագրի համաձայն<sup>38</sup> հիշատակվում է **Ոստան** (Ոսկան) անունով մի հայորդի, որն ապրել է 1431 թ-ին<sup>39</sup>:

Բրյուսելից մեկնելով «Ռոտենդ»՝ Ռոտերդամ (*U.S.*), Ալիշանն իր հուշատետրում Հոլանդիա այցելելու նպատակների մասին ոչ մի նշում չի թողել<sup>40</sup>: Խիստ ծանրաբեռնված լինելով յուրաքանչյուր օրվա համար նախատեսված գործողություններով և հանձնարարականներով, նա մանրակրկիտ հաշվետու էր լինում իր կատարած աշխատանքների համար, ուստի քիչ հավանական է, որ Հ. Ալիշանը, առանց որևէ «ծրագիր» ունենալու, հաղթահարելով 150 կմ., աննպատակ ուղևորվեր Ռոտերդամ: Չի բացառվում, որ պատճառ կարող էին հանդիսանալ այդ տարիներին մեծ հետաքրքրություն առաջացրած՝ հայկական ոսկյա և արծաթյա մեդալները<sup>41</sup>: Առաջին ուսումնասիրությունները պատկանում էին հոլանդացի գիտնական Վան Դեր Լոնին<sup>42</sup>, որը մանրամասն նկարագրել էր մեդալների պատկերազարդ փորագրություններն ու հայատառ գրությունները. «խոհեմութին», «առաքինութին», Սուրբ երրորդության խորհուրդը՝ «ՀԱՅՐ.ՈՐԹ.ՀՈՔԻ.Ա.ԱԾ» (Աստված – *U.S.*), «ՄԱՔՈՒՐ ՀԱԻԱՏ», «ՀԱՍՏԱՏՈՒՆ ՅԻՅՍ», «ԿԱՏԱՐԵԱԼ ՍԵՐ» ևն<sup>43</sup>: Նիդերլանդներում, հայկական գաղթավայրի ստեղծման վերաբերյալ առաջին տեղեկությունները թվագրվում են XIV դ.<sup>44</sup> և դրա վառ ապացույցն է Մասստրիխտի<sup>45</sup>

<sup>38</sup> Rapport Belgique – Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suède, par F. Macrel, Paris, 1924 (տե՛ս. Աճառյան Հ., ՀԱԲ, հ. 5, Երևան, 1962, էջ 382):

<sup>39</sup> Աճառյան Հ., ՀԱԲ, հ. 4, Երևան, 1948, էջ 193:

<sup>40</sup> Բացառությամբ՝ «Հյուսիսային ծովու» երգի, որը նա ստեղծել էր տեղի բնության գեղեցկությամբ տոգորված (տե՛ս. Երեմեան Ս., նշվ. աղբ., էջ 49-50):

<sup>41</sup> Հայկական առաջին մեդալները ստեղծվել են 1660-ականներին, և նրանցից առավել հայտնի են Հոլանդիայի հայկական գաղթօջախում պատրաստվածները (XVIII դ.) (տե՛ս. Սարուխան Ա., Հոլանդիան և հայերը, ԺՁ-ԺԹ (XVI-XIX) դարերում, «Հանդէս ամսօրյա», 1928, Վենետիկ, N 9-10, էջ 443):

<sup>42</sup> Gerard van der Loon. Beschrijving van Nederlandsche Historie Pennengen, Amsterdam, 1848. S. 380-382:

<sup>43</sup> Տե՛ս. Саркисян Г., Армянские медали, изготовленные в Голландии, «Լրաբեր», 1980, N 3 (65), էջ 67-68:

<sup>44</sup> Տե՛ս. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմություն, հ. 1, Երևան, 1961, էջ 403:

<sup>45</sup> Մասստրիխտը (Maastricht) Հոլանդիայի հնագույն քաղաքներից է, որտեղ գտնվում է ամենահին եկեղեցին՝ Սուրբ Սերվատի (Серватий, Servatios) բազիլիկան: Եկեղեցու գանձարանում պահվող տարեգրության համաձայն այն IV դ. հիմնադրել է Սերվատը Հայաստանից, որը Երուսաղեմից անցնելով Տոնգերեն (ներկայիս Բելգիան), 381-382 թթ. ձեռնադրվելով եպիսկոպոս և օծվելով՝ քրիստոնեություն է քարոզել: Սուրբ հրեշտակի տեսիլքը հրամայել էր նրան քարոզչություն անել հյուսիսային հողերում. հոների հարձակումներից խուսափելով՝ Սուրբ Սերվատը եպիսկոպոսական աթոռը Տոնգերենից

Սբ. Սերվատ հայկազունի (Saint Servatius) բազիլիկայի գանձարանում պահվող հայկական ժողովրդական արվեստի վարպետների ստեղծած բացառիկ արժեք ներկայացնող մի կտավ՝ XIV դ. «Մարաշ»-ի ինքնատիպ զարդանախշերով և հանգույցների յուրահատուկ տեխնիկայով կատարված ձեռագործը, որը Կիլիկյան թագավորության ժամանակակիցն է և ավելի քան մեկ դարով մեծ Օսմանյան կայսրությունից: Առհասարակ, Մասստրիխտի բազիլիկայի հետ կապված հիշատակումը հայերի հետքը Նիդերլանդներում կարող է տեղաշարժել մեկ հազարամյակով՝ XIV դ-ից տեղափոխելով IV դ., դեպի հայկազուններից սերված Սուրբ Սերվատը, որն ըստ էության՝ Հոլանդիայի առաջին օձված եպիսկոպոսն էր և քրիստոնեության քարոզիչը:

Հնարավոր է, որ Հ. Ալիշանը Սուրբ Սերվատ հայկազունի գոյության մասին տեղյակ չի եղել, այլապես քիչ հավանական է, որ նա այցելեր այդ սրբի մասունքները և ոչ մի նշում չթողներ իր հուշատետրում: Ուստի, Նիդերլանդներ ուղևորվելու հավանական պատճառ ենք համարում հայկական մեդալները<sup>46</sup>:

Հոլանդիա այցելելուց քառասուն տարի անց՝ 1893-ին լույս է տեսնում Հ. Ալիշանի «Սիսական»<sup>47</sup> աշխատությունը, որը չհնացող կոթող է հայագիտության գանձարանում<sup>48</sup>: «Սիսական»-ում Հ. Ալիշանը անուն առ անուն բերում է Նոր Ջուղայից<sup>49</sup> Հոլանդիա տեղափոխված և Ամստերդամում բնակություն հաստատած 70 հայ ընտանիքների ցուցակը, որոնց թվում էին ոսկյա մեդալների վրա փորագրված

---

տեղափոխել է Մասստրիխտ, որտեղ էլ 384-ին մահացել է: Մայիսի 13-ը հայկազուն սրբի տոնն էլի օրն է (տե՛ս Буров А.А., Избранные жития святых в Европейских землях просиявших. Москва, 2005-2015):

<sup>46</sup> Չմոռանանք, որ Հ. Ալիշանի հայրը՝ Պետրոս-Մարգարը (1775-1834) Կ. Պոլսում հայտնի դրամագետ էր և հնահավաք: Ալիշանը, դեռևս մանկահաս տարիքում, հասկանում էր, թե ինչ պատմական արժեք են ներկայացնում հնության շունչ ունեցող թանկարժեք իրերը՝ զարդերը, դրամները, մեդալները, ինչպես նաև հին փաստաթղթերն ու ձեռագրերը, ուստի քաջ գիտակցում էր դրանց իրական նշանակությունը:

<sup>47</sup> Սիսական աշխարհը՝ Սյունյաց երկիրն է, Մեծ Հայքի պատմական Սյունիքը, որը հնագույն երկրամասերից մեկն է: Ալիշանն արժեքավոր տեղեկություններ է հաղորդել քաղաքների, գյուղերի, պատմական հուշարձանների, լեռների, գետերի, լճերի, ձորերի, բազմաթիվ մեծարժեք նյութեր հայկական վանքերի, հնագույն արձանագրությունների վերաբերյալ, ամփոփելով մինչ այդ հրատարակված բոլոր աղբյուրները:

<sup>48</sup> Ալիշանը նախատեսել էր գրել պատմական Հայաստանի բոլոր տասնհինգ նահանգների մասին պատմա-աշխարհագրական բնույթի աշխատություններ, որոնք պետք է գետեղվեին 20-22 մեծադիր հատորներում: Ցավոք, շարքը սահմանափակվեց 4 հատորով. առաջին գործը «Շիրակ»-ն էր (1881), որին հաջորդեցին «Սիսուան»-ը (1885), «Այրարատ»-ը (1890) և «Սիսական»-ը (1893):

<sup>49</sup> Ջուղան պատմական որոշ ժամանակահատվածում մտել է Սյունիք աշխարհի մեջ (տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 4, Երևան, 1938, էջ 426): Պատմական Ջուղայի, ինչպես նաև Նոր Ջուղայի բնակչության զգալի մասի նախնիները Սյունիքից են՝ Սիսական աշխարհից:

**Մասեան և Խալդարեանց** ընտանիքների անուն-ազգանունները<sup>50</sup>. «Մասեի որդի՝ Ալեքսանին» և «Հակոբջանի որդի՝ Օհանջանին (Օհանին)»<sup>51</sup>: Ղ. Ալիշանի «Սիսական»-ից 6 տարի անց Վիեննական մխիթարյանների միաբանությունը կրկին անդրադարձավ «հայ-հոլանդական» մեդալների թեմային<sup>52</sup>:

Ռոտերդամից Փարիզ ուղևորվելիս Հ. Ալիշանն այցելում է Վաթեռլոո<sup>53</sup> բնակավայրը. նա ծածուկ համակրանք ուներ դեպի «աշխարհաստատ մեծ Պատերազմիկը»՝ Նապոլեոնը, որի պարտությունը սգում էր Ֆրանսիան<sup>54</sup>: Ալիշանը շրջում էր դաշտի մեջ, որտեղ տեղի էր ունեցել այդ մեծ ճակատամարտը. «... ներկայ գտնուած երիտասարդ մը, Նահապետին ցույց կու տար բանակներու տեղերն. նա կը զննէ Նափոլեոնի պարտութեան ի յիշատակ կոթող Առիծը, որ իր վրայ խոր տպաւորութիւն կը թողու...»<sup>55</sup>: Ալիշանը, բարձրանալով այդ հուշակոթողի<sup>56</sup> վրա, իր հուշատետրում հետևյալ տողերն է գրել.

«Առիծ անուն ես Ալիշան,  
Թողի զԱռիծս այս զիմ նըշան»:

1853-ի հոկտեմբերի 1-ին Ալիշանը Փարիզում էր: Մայրաքաղաք հասնելու ցանկությունը մեծ էր, քանզի նա անհամբերությամբ սպասում էր «գրչագրաց դիանապետ Ռենոյի»<sup>57</sup> հետ հանդիպմանը: Ռենանի (Ռենո) հետ Ալիշանին

<sup>50</sup> Տե՛ս. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, 1893, էջ 460:

<sup>51</sup> Հնագետ Վան դեռ Մէրը նշում է, որ հայերը, հարուստ հոլանդացիներից փոխառնելով տոնական առիթներին հուշամեդալներ նվիրելու սովորույթը, իրենց որդիների հարսանիքներին այդպիսի մեդալներ էին պատվիրում (G. van der Meer. Vier Armenische Penningen Nieuws, 1961, N 3. S. 29-30): Ապա նշում է հեղինակ-վարպետին՝ Յոհաննես Գեորգ Խոլցխեյին, որի հուշատետրում պահպանվել են այդ երկու հայ ընտանիքների պատվերները՝ 5 մեծ և 5 փոքր ոսկյա մեդալների պատրաստումը (տե՛ս. Սարգսյան Հ., Հայկական հարսանեկան մեդալներ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, N 7, էջ 48-56, նաև՝ Саркисян Г., Армянские медали, изготовленные в Голландии, АН АрмССР, «Вестник», 1980, N 3 (65), с. 65-72):

<sup>52</sup> Տե՛ս. Թորգոմեան Վ., Հիշատակ մը Ամստերդամի հայ գաղթականության, «Հանդէս ամսօրյա», 1899, N 1, էջ 20-22:

<sup>53</sup> Վաթեռլոոն (Waterloo) Բրյուսելից 20կմ. հեռավորությամբ գտնվող փոքր քաղաք է, որտեղ 1815 թ-ին տեղի ունեցավ ճակատամարտ՝ Նապոլեոն Բոնապարտի բանակի և անգլո-հոլանդա-պրուսական զորքերի միջև՝ Վաթեռլոոյի ճակատամարտը:

<sup>54</sup> Վաթեռլոոյի ճակատամարտի հիշատակին Ալիշանը գրել է ողբերգ:

<sup>55</sup> Երեմեան Ա., նշվ. աղբ., էջ 50-51:

<sup>56</sup> Ձեռակերտ հողաթմբի վրա, 40 մ. բարձրությամբ, տեղադրված է հսկայական առյուծի բրոնզե արձանը (28 տոննա), որը հայտնի է Առյուծի սար անվամբ (Lion's Mount): Ավանդության համաձայն արձանը ձուլել են ֆրանսիացիների դաշտում թողած զենքերից: XIX դ. Վաթեռլոո բնակավայրը Հոլանդիայի կազմի մեջ էր. պատերազմից 10 տարի անց, 1825-ին Նիդերլանդների թագավոր Վիլլեմ I Օրանսկին, ի հիշատակ ճակատամարտում զոհված զինվորների՝ պատվիրում է կառուցել մեծ հուշարձան: Կառուցվել է այնտեղ, որտեղ վիրավորվել է գահաժառանգ արքայազն Վիլլեմ II Օրանսկին:

<sup>57</sup> Ռենան (Renán) Ժոզեֆ Էրնեստ (1823-1892)՝ ֆրանսիացի փիլիսոփա, գրող, քննադատ, պատմաբան, կրոնագետ, հնէաբան և արևելագետ, 1850-57 թթ. Փարիզի Ազգային գրադարանի վարիչ:

ծանոթացրել էր Գաբրիել Այվազովսկին՝ հայր Գաբրիելը<sup>58</sup>, աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկու եղբայրը, որն այդ տարիներին Փարիզի Մուրադյան վարժարանի տնօրենն էր: Ազգային գրադարանի մատենադարանում պահվում էին Խորենացու երկու ճառերը, նամակը, Դաստառակի պատմությունը<sup>59</sup>: Մի քանի օր հաճախելով Փարիզի մատենադարանը, Ալիշանը Մուրադեան վարժարան է տանում Երուսաղեմից ժամանած խիստ հին **Ճաշոցը**, **Տոնական** գրչագիրները, և **Աբգար** թագավորի թուղթը:

Հայր Ալիշանը շտապ պետք է վերադառնար Ս. Ղազար, և կրոնական հնազանդության կոչին հպատակվելով, հոկտեմբերի 22-ին Փարիզից մեկնում է Վենետիկ: Սակայն, առջևում նրան տհաճ անակնկալ էր սպասում. Շվեյցարիայից Ավստրիայի սահմանն անցնելուց, Հռենոսի կողմերը, սահմանապահները Հ. Ալիշանի մուտքն Իտալիա արգելում են, պատճառաբանելով, որ նրա անձնագիրը Ավստրիայի դեսպանի կողմից ստորագրված չէ: Ալիշանին խուզարկելուց գտնում են «Ողբամ զքեզ, Հայոց աշխարհ» նկարը<sup>60</sup> և կարծում են, թե նա իտալացի հեղափոխական է: Ստեղծված իրավիճակը բռնություն համարելով՝ Հայր Բանաստեղծը խիստ վրդովված և խորը վիրավորված էր: Տրտաշունչ ձմեռ էր, եղանակը վայրագ, և մինչև Միլանից կհասներ նամակ-թույլտվությունը՝ Ալիշանն այդ սառնամանիքը ստիպված էր անցկացնել Ալպիական լեռան ստորոտում:

Վենետիկում, երկու ամիս հազիվ թե վարած լիներ իր հոգևոր դաստիարակության պաշտոնը, երբ վանքի և Փարիզի Մուրադեան<sup>61</sup> վարժարանի

<sup>58</sup> Գաբրիել Այվազովսկին (1812-1880) ավարտելով Ս. Ղազարում իր ուսումը, դարձել է Մխիթարյան միաբանության անդամ, ձեռնադրվել է վարդապետ, ապա վարել միաբանության ընդհանուր քարտուղարի գործերը: 1843-ին հիմնադրել և խմբագրել է (մինչև 1848-ը) «Բազմավեպ» հայագիտական հանդեսը:

<sup>59</sup> «Տիրոջ Դաստառակ»-ը (Դաստառակ՝ թաշկինակ, անձեռոց, սրբիչ)՝ Փրկչի կենդանագիր պատկերն է, որը հայտնի է նաև «Սուրբ Մանդիլիոն» անվամբ, արդեն 6 դարից ավելի պահվում է Իտալիայում՝ Ջենովայի Սուրբ Բարդուղիմեոս հայկական եկեղեցում: Ըստ ավանդության, դա Հիսուսի ամենահին պատկերն է և Հովհաննեսի Ավետարանի համաձայն՝ այն Փրկչի իրական պատկերն է (տե՛ս ստորև՝ էջ 15):

<sup>60</sup> Ենթադրվում է, որ այդ նկարի հեղինակը հայ տպագրիչ, վիճագրիչ, հայերեն տպատառերի բարեփոխիչ, գրող և հրապարակախոս Ճանիկ Արամեանն է (1820-1879): XIX դ. երկրորդ կեսին այդ նկարը լայն ժողովրդականություն էր վայելում հայ իրականության մեջ. ավերակների վրա նստած լացող մի կին՝ Մայր Հայաստանի խորհրդանիշը, ուրվագծվում էր Մասիսի հեռապատկերի հենքին (տե՛ս. Ասմարյան Հ., Ղևոնդ Ալիշանի ճանապարհորդական նոթերից, «Լրաբեր», 2003, N 2 (127), էջ 127-135):

<sup>61</sup> Նապոլեոն կայսրը, մեծ համակրանք ունենալով հայերի հանդեպ, գրչի մեկ շարժումով, 1810-ի օգոստոսի 17-ին Վենետիկի Ս. Ղազար մենաստանին շնորհեց մի շքեղ պալատ՝ իշխան Կոնդեի դղյակը: Սևր գետի ափին՝ Սեն-Գյուլի դարաստանի դիմաց գտնվող այդ գեղեցիկ շենքում (100 սենյակներով և

միաբանների միջև խզվեց ներդաշնակությունը, բացելով «տխուր խրամատ»<sup>62</sup>: Իր լավ բարեկամ և «սիրելի եղբայր»՝ Գաբրիել Այվազովսկուն ուղղված նամակում<sup>63</sup> Ալիշանն ամեն ջանք գործադրում էր, որ երկու կողմերը հաշտեցնի, սակայն դա նրան այդպես էլ չհաջողվեց<sup>64</sup>:

Սուրբ Ծննդյան տոները ավարտելուն պես Հ. Ալիշանը մեկնեց Վենետիկից և 6 օրվա ընթացքում հասավ Փարիզ: Հիմնական հանձնարարականից զատ, Ալիշանը դարցյալ շարունակում է փնտրել հայկական ձեռագրեր և սրբավայրեր: Սուրբ Ժենէվիկի<sup>65</sup> մատենադարանում գտնում, ապա ընդօրինակում է Ավետիք պատրիարքի<sup>66</sup> մի քանի հիշատակարաններ: Փարիզից շոգեկառքով ուղևորվում է

---

ընդարձակ պարտեզով) գործում էր Մուրադյան վարժարանը: Նշենք, որ այդ ժամանակահատվածում Ֆրանսիայի տարածքում գործող բոլոր իտալական կղերական մենաստանների գործունեությունը կայսեր հրամանով կասեցված էին: Այդ պատմական շենքում 1920 թ. օգոստոսի 10-ին Հայաստանի հանրապետության անունից Ավետիս Ահարոնյանը ստորագրեց Սևրի պայմանագիրը (տե՛ս. Դավթյան Ռ., Սամուել Մուրատյանը և նրա անվան վարժարանը, Լրաբեր // Սփյուռքահայ կրթական օջախներ և դպրոցներ, Երևան, 1990, N 9 (65), էջ 65-72):

<sup>62</sup> Խնդիրը հետևյալն էր. կատարելով Հռոմի թելադրանքը, Միաբանության աբբահայր Գևորգ Հյուրմյուզյանը Մուրադյան վարժարանի տնօրեն՝ Սարգիս Թեոդորյանին կարգադրել էր վարժարան ընդունել միայն այն երեխաներին, որոնք կաթոլիկ ծնողների զավակներ էին: Թեոդորյանը, ունենալով դպրոցի ուսանողական կազմի և հատկապես Գաբրիել Այվազովսկու հավանությունն ու պաշտպանությունը, չկատարեց այդ կարգադրությունը: Դեռ աղմուկը չդադարած՝ Հյուրմյուզյանը նոր կարգադրություն տվեց. Մուրադյան վարժարանը Հռոմ տեղափոխելու և այդ կապակցությամբ նախնական պատրաստություններ սկսելու մասին: Այս երկրորդ հրամանն ավելի բորբոքեց կրքերը և վիճակը էլ ավելի բարդանալով՝ խորացավ և բուռն ընթացք ստացավ (տե՛ս. Թեոդորյան Սարգիս, Պատմութիւն Մուրատեան և հայկազեան վարժարանաց, հ. 2, Փարիզ, 1886, էջ 193):

<sup>63</sup> Տե՛ս. Ղ. Ալիշան, Գրական ժառանգություն, հ. 5, Նամակներ, Երևան, 1969, N 3 (էջ 16) և N 4 (էջ 17-18):

<sup>64</sup> Տե՛ս. Թեոդորյան Ս., նշվ. աշխ., էջ 194:

<sup>65</sup> Գենովաբեն (Geneviève) (420 ≈ 512 թթ.) Փարիզի պահապան սուրբն է, որը մանուկ հասակից ուխտեց կուսություն: Երբ հոները, Աթթիլայի առաջնորդությամբ արշավեցին դեպի Փարիզ, իսկ ժողովուրդն ահաբեկված փորձեց փախչել քաղաքից, սրբուհին ետ պահեց նրանց, գուշակելով, որ թշնամին քաղաքին վնաս չի հասցնի (տե՛ս. Փափազեանց Իգ., Պատմութիւն եկեղեցական, Ս. Ղազար, Վենետիկ, 1848, էջ 248):

<sup>66</sup> **Ավետիկ Եվդոկիացին**, կամ ինչպես ասում էին **Ավետիք Պատրիարքը** (1657-1711 թթ.) ծնվել է Եվդոկիայում: Եպիսկոպոս է ձեռնադրվել 1691-ին, ապա՝ Կ. Պոլսի պատրիարք (1702): Ավետիքը, խիստ հալածանք ունենալով կաթոլիկների դեմ, կղերականների կողմից հռչակվեց որպես ոխերիմ հակառակորդ: Երուսաղեմի պատրիարքությունն ընդունելուց հետո նրան արքունիցի Ասորիք (1703): Հայ մեծամեծերը կաշառեցին եպարքոսին և նրանց հաջողվեց պատրիարքին վերադարձնել: Նրա հզոր թշնամիներից մեկը Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպան՝ մարկիզ Շառլ դե Ֆերրիոլն էր: Անընդմեջ գործելով պատրիարքի դեմ, երկրորդ արքունիցի նրան արձակելուն պես՝ Քիոս կղզում Ավետիքին առևանգեցին, փախցնելով Մարսել (1706) և բանտարկեցին Mont-saint-Michel վանքում: Ապա տեղափոխեցին Բաստիլիա (1709-ի դեկտեմբերի 18-ին) և երկար տանջաքնքներից հետո նրան ստիպեցին ընդունել կաթոլիկություն: Այս վերջին շրջանում, քահանայելով Փարիզի եկեղեցիներից մեկում, արտագրել է բազմաթիվ ձեռագրեր, որոնք այսօր պահվում են Փարիզի Ազգային մատենադարանում: Ավետիկ Եվդոկիացին եվրոպական մատենագիտությանը հայտնի է նաև «Երկաթե դիմակով մարդ» անունով: Այդ առեղծվածային բանտարկյալի ինքնությունը բացահայտելու համար ավելի քան 50 հեղինակներ իրենց ուսումնասիրություններում զարգացրել են 14 վարկածներ, որոնք առնչվել են նաև Ավետիք Պատրիարքի

Էտամպ (Etampes)՝ Պիտիվե գյուղաքաղաքը (Բիթիվիէ – Ղ.Ա.). «կը գտնէ Ս. Գրիգոր Հայկազնոյ<sup>67</sup> տաճարը, ուր ամփոփված են սուրբին նշխարները: Կը տեղեկանայ, որ նաև Էդուի (Estory) գիւղի մէջ կը պահուին հայ սուրբին նշխարներէն. հետիոտն հոն կը դիմէ, ժողովրդապետէն կ'առնու սուրբին կենսագրութիւնը զոր կարդալով կը համառօտէ: Գյուղի երեցը կ'պատմէ, որ 1641 էն սկսեալ Հայ սուրբը հոն կը տօնուի: Նոյն տեղերը կը տեսնէ հայ սուրբին յիշատակին նուիրագործուած մի քանի մատուռներ և անոր քարայրը, ուր եօթը տարի նճգներ է, տեղւոյն աւագ երէցէն կ'իմանայ, որ այս քարայրին ուխտի բերեր են անդամալոյծ տղայ մը և հայ սուրբին աղօթքով տղան ողջ առողջ դարձել է: Զատկի երրորդ օրը այն կողմերը ի պատիւ սուրբին մեծ հանդէսներ կը կատարեն. և տարուան մէջ մի քանի անգամ ի յիշատակ սուրբին ուրիշ տոնախմբութիւններ ալ կը կատարեն»<sup>68</sup>: Ուշագրաւ է, որ Փարիզի Ազգային գրադարանի ձեռագրացուցակը կազմող ֆրանսիացի անվանի հայագետ Ֆրեդերիկ

---

անձին: Պատմական արժեքավոր սկզբնաղբյուր է նրա «Կենսագրութիւնը» (1707) (տե՛ս. «Մասիս», 1874, N 1490-1496; 1498-1500; նաև՝ Աճառյան Հ., ՀԱԲ, հ. 1, էջ 341-342):

<sup>67</sup> Գրիգորը ծնվել էր Սեբաստիայի Նիկոպոլիս (Շապին- Գարահիսա – Մ.Տ.) քաղաքում, X դ. կեսերին (Բյուզանդական Հայաստան): Հարուստ ընտանիքի մինուճար զավակը, ծնողների մահից հետո ժառանգում է մեծ հարստություն, ապա իսկույն բաժանում այն աղքատներին և ինքը առանձնանում մենաստանում, ամբողջ օրն անցկացնելով աղոթքների մէջ: Շուտով նրան ձեռնադրում են Նիկոպոլիսի արքեպիսկոպոս. տուժածները, տառապալներն ու հիվանդներն նրա ջերմեռանդ աղոթքներով ապաքինվում են, իսկ նրա համբավը տարածվում է Փոքր Հայքով մեկ: Օրերից մի օր հրաշագործ արքեպիսկոպոսը պարզապես անհետանում է (Աստծո տեսիլքը նրան հրամայում է ճամփա ընկնել): Հատելով Իտալիան, Գրիգոր արքեպիսկոպոսը հասնում է Ֆրանսիա. Օրլեանի մոտակայքում, Պիտիվե գյուղում, Տիրոջ նշանով նա գտնում է իր վերջին կացարանը: Մի փոքրիկ մատուռի մոտ նա խորը փոս է փորում, դարձնում իրեն վանական խուց և 7 տարի ապրում այնտեղ (992-999 թթ.): Շաբաթվա կենտ օրերին ծոմ է պահում, զույգ օրերին սնվում անտառի բարիքներով, իսկ տոն օրերին բոլոր ուխտավորներին հյուրասիրում իր պատրաստած քաղցրավենիքով՝ մեղրով, իմբիրով և տարեկանի աշորայի ալյուրից թխվածքաբլիթներով. այդ բաղադրատոմսով պատրաստված անուշահացերը շատ ընդունված էին իր հայրենիքում: Այդ սովորույթը հետագայում տարածվեց Եվրոպայով մեկ՝ Սուրբ Ծննդին միմյանց անուշահաց նվիրել (имбирные пряники), մինչդեռ քչերին է հայտնի, որ այս ավանդույթի հայրենիքը Հայոց Սեբաստիան է: Գրիգոր Մակար Նիկոպոլսեցին մահանում է 1010 թ-ին և նրան թաղում են հենց իր վանախցում, իսկ տարիներ անց, երբ նրան փնտրող հայրենակիցները վերջապես գտնում են նրա վերջին հանգրվանի տեղը՝ զարմացած գյուղացիներին պատմում են, թե ով է այդքան տարի ապրել նրանց հարևանությամբ: Գրիգոր Նիկոպոլսեցին (Святой Григорий Никопольский Армянин) Տիեզերական Ուղղափառ և Կաթոլիկ եկեղեցիների տոնելի սուրբ է (մարտի 16) (տե՛ս. Византийский словарь, т. 1 // Ред. К.А. Филатова, СПб., «Амфора», 2011, с. 263-264; The book of saints: A dictionary of persons canonized or beatified by Catholic Church. New York; Thomas Y. Crowell, Benedictine Monks of St. Augustine Abbey, Ramsgate, 1947):

<sup>68</sup> Երեմեան Ս., նշվ. աշխ., էջ 59:

Մակլերը, անդրադառնալով Պիտիվեի Սբ. Գրիգոր տաճարի ճարտարապետական առանձնահատկություններին, հիշատակում է հայ ճարտարապետի (XIII դ.)<sup>69</sup>:

Ջենովա<sup>70</sup> (Ճենովա – Ղ.Ա.) ուղևորվելիս Ալիշանն այցելում է նաև Լիոնի Ազգային մատենադարանը և ընդօրինակում է երեք նորընտիր ձեռագրեր: Ջենովայում Ալիշանը այցելում է Սուրբ Բարդուղիմեոսի անվ. հայկական եկեղեցին (Chiesa di Bartolomeo degli Armeni), որի ստեղծումը կապվում է Սև լեռան վանքի<sup>71</sup> երկու վանականների՝ Մարտիրոս Սևեռնցու<sup>72</sup> և վանքի իր ճգնակից ընկեր՝ Գուլիելմոսի անունների հետ, որոնք Սուրբ Բարսեղի կարգի վանականներ էին: Հայրենի Կիլիկիայում թողնելով երբեմնի ծաղկող վանքի ավերակները, նրանք տեղափոխվում են Ջենովա, հաստատվում մի բարձունքի վրա (այժմ՝ Կաստելլո տարածքը)<sup>73</sup>, ապա 1307-ին կառուցում Սուրբ Բարդուղիմեոսի<sup>74</sup> հայկական եկեղեցին: Բացի սուրբ

<sup>69</sup> Ֆրանսիայի Պոր-դե-Կլերմոնի Աստվածամոր, ինչպես նաև Կազորի Մայր տաճարների վերականգնողական աշխատանքներում Ֆ. Մակլերը կրկին հիշատակում է նույն վարպետին, առանձնացնելով նրա ուրույն հայկական ճարտարապետական ձեռագիրը (տե՛ս. Халпахчьян О., Средневековое зодчество Армении и его значение в истории мировой архитектуры // Историко-филологический журнал АН АрмССР, 1968, N 4):

<sup>70</sup> Ջենովան (Genova), կամ ինչպես ասում են՝ Գենուան, պատմական Լիգուրիայի մայրաքաղաքն է, որը գտնվում է Իտալիայի ծայրագույն հյուսիսում և ամենախոշոր նավահանգիստն է: Դեռևս միջնադարում, որպես ծովային պետություններ, Ջենովայի և Հայոց Կիլիկիայի միջև հաստատվել էին ամուր առևտրատնտեսական հարաբերություններ:

<sup>71</sup> Կիլիկիայի Ամանոսյան լեռների շրջանում գտնվող Քեսուամի Կարմիր վանքը, որն ավելի հայտնի է «Սև լեռի վանք» անունով, XII դ. հռչակվել էր որպես կրթական բարձրագույն կենտրոն, ուր ուսանելու էին գալիս ողջ Հայաստանից: Վանքում պատրաստում էին բազմակողմանի կրթված և կրոնական բարձր նկարագիր ունեցող վարդապետների, որի ամենանշանավոր սանը Ներսես Շնորհալին էր: Վանքը հայտնի էր 1113 թ. գումարած ժողովով՝ Սև լեռան ժողով (Գրիգոր Գ Պահլավունու և Աղթամարի եպիսկոպոս Դավիթ Արծրունու կաթողիկոսական աթոռի վեճը), որին ներկա էին 2500 վարդապետ և եպիսկոպոս: Մեկ տարի անց, 1114 թ-ին երկրաշարժից, Սամոսատի և Մարաշի հետ ավերվել են նաև Սև լեռան վանքերը (տե՛ս. Մխիթարյան Աբ., Պատմութիւն ի ժողովոյ Հայաստանեաց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874):

<sup>72</sup> Կաթողիկ աշխարհը նրան հիշում է Martino di Sigarizi (հնչյունափոխված Սևեռնցի) անունով:

<sup>73</sup> Շրջակա տարածքները պատկանում էին հարուստ բանկատեր Օբերտո Պուրպուրեյոնին, որը եկեղեցու և վանքի կառուցման համար վանականներին նվիրում է հող և 100 լիր (100 լիրը ≈ 1 կգ ոսկի), խնդրելով որ իր հոգու համար պատարագ մատուցեն: Տեղյակ լինելով Կիլիկյան Հայաստանի ծանր քաղաքական վիճակի մասին, Հռոմի պապ՝ Կլիմենտ V-ը 1307-ին փետրվարի 20-ին իր համաձայնությունն է տալիս հայկական եկեղեցու կառուցման համար (տե՛ս. «Անիվ», журнал «Анив», «Тайна святого лика», М., 09,2008, N 5 [14]):

<sup>74</sup> Բարդուղիմեոսը Քրիստոսի 12-առաքյալներից էր, որը Հայաստանում տարածել է քրիստոնեություն (60-68-ին): Նրա մասին Հիսուսը ասել է. «Ահա իսկական մի իսրայելցի, որի մեջ նենգություն չկա» (Աստուածաշունչ, Հովհ. 1,47; Մատթ. 10,1-3; Մարկ. 3,13-19): Աղբյուրների համաձայն Բարդուղիմեոս առաքյալը եկել է Գողթն, այնուհետև Հեր և Ջարևանդ գավառները, անցել Արտաշատ, որտեղ և հանդիպել է Թադեոս առաքյալին: Առաքյալը նահատակվել է Սանատրուկ թագավորի կարգադրությամբ՝ Արևբանոս (Ուրբանոս) քաղաքում. Բարդուղիմեոսին խաչել են գլխիվայր, բայց նա շարունակել է քարոզը: Ավանդության համաձայն նա նահատակվել է մաշկազերծ արվելով 66 թ., ինչի համար էլ պատկերագրության մեջ սովորաբար պատկերվում է մորթը ձեռքին (այլ աղբյուրների համաձայն բրածեծի է ենթարկվել):

առաքյալի նշխարքներից՝ այդ եկեղեցում ամփոփված է նաև համայն քրիստոնյա աշխարհի մեկ այլ նվիրական մասունք՝ Փրկիչի կենդանության օրոք կատարված միակ դիմանկարը<sup>75</sup>: Սուրբ Պատկերով դաստառակի (թաշկինակ, սրբիչ) ստեղծման պատմությունը դարձյալ կապված է Հայոց աշխարհի հետ՝ Հիսուս Քրիստոսի և Եղեսիայի<sup>76</sup> Աբգար Ե թագավորի<sup>77</sup> նամակագրությունը: Երկհազարամյա պատմություն ունեցող այդ նամակագրությունը, իր տեսակի մեջ նախադեպը չունեցող՝ պատմագիտական աներևակայելի արժեքավոր գործ է: Այդ նամակագրության առաջին պատմական վկայությունը հույն պատմիչ, «եկեղեցական պատմության» հայր՝ Եվսեբիոս Կեսարացունն է (265-340 թթ.), որը Եղեսիայի արխիվում այդ իրադարձությունները վավերացնող ասորերեն ձեռագիր է հայտնաբերել (340 թ.),

<sup>75</sup> Ջենովայի հայկական եկեղեցում պահվող Քրիստոսի անձեռակերտ դաստառակից (սրբիչ, թաշկինակ) բացի, հայտնի է նաև Աստվածային Պատկերի մեկ այլ «տարբերակ»՝ Քողը Մանուպելլոյից, որն ի սկզբանե պահվել է Վատիկանի Սուրբ Պետրոսի բազիլիկայում, սակայն 1527 թ. Հռոմում ստեղծված ծանր իրադարձություններից ելնելով, վարչամակը, կողոպուտից փրկելու նպատակով, Կլեմենտ Պապի կարգադրությամբ, տեղափոխվել է լեռնային Աբուցո շրջանում գտնվող Մանուպելլո գյուղը: Ավանդության համաձայն, Հիսուսի խաչելության ճանապարհին մի կնոջ կողմից տրված գլխաշոր է (ավելի ճիշտ թաշկինակ, սրբիչ, 21 x 17,5 չափերով), որպեսզի Քրիստոսը սրբի դեմքը... դրանից հետո գլխաշորի վրա հայտնվել է Փրկիչի դիմանկարը: Պատմության մեջ այն հայտնի է նաև «Վերոնիկայի քող» անվամբ (vera – ճշմարիտ և icona – կերպար, կնոջ անձնանունն չէ): Ջենովայում պահվող դաստառակը վուշի կտավ է, որտեղ Փրկիչի պատկերը բավականին հաստատուն է, իսկ Մանուպելլոյի դաստառակը մետաքսաթել վիսոն կոչված գործվածք է, որի վրա գրեթե ոչինչ չի երևում, ինչի համար Մարտին Լյութերն այն խաբեություն է համարել: Վիսոնը կոչվում է նաև ծովային մետաքս՝ ստանում են Միջերկրական ծովում բնակվող մեծ միդիայի մազաթելերից. այն շատ թանկարժեք գործվածքի տեսակ է, և հանդիսանում է արքայական հագուստի հանդերձանքի բաղկացուցիչ մաս (տե՛ս. Վահան Քոչար, Քրիստոսի պատկերով թաշկինակը կամ դաստառակ, «Ազգ» օրաթերթ, N 29, 29-07-2016):

<sup>76</sup> Եղեսիան Հայկական Միջագետքի (Վերին Միջագետք) խոշոր քաղաքներից էր: Քաղաքի հիմնադրման մասին պահպանվել են մի քանի ավանդություններ: Դրանցից մեկի համաձայն Եղեսիան հիմնադրել է Բելը, ըստ մի այլ ավանդության՝ այն կառուցվել է Աստվածաշնչում հիշատակված Ուր կոչված քաղաքի ավերակների վրա (այդ իսկ պատճառով արաբական տիրապետության ժամանակ վերանվանվել է Ուրֆա, Ուռհա), իսկ Եղեսիա անունը քաղաքը ստացել է Ալեքսանդր Մակեդոնացու զորավար Սելևկոսի դստեր՝ Էղեսեի անունով: Մեսրոպ Մաշտոցը այստեղ է հայտնագործել հայոց այբուբենը (տե՛ս. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 167):

<sup>77</sup> Օսրոյենե թագավորության արքա՝ Աբգար V-ը (կառավարել է Ք.ճ.ա. 4-7 թթ. և երկրորդ անգամ՝ 13-50 թթ.) մեծարվում է որպես հայոց առաջին քրիստոնյա թագավոր: Լսելով Փրկչի հրաշագործությունների համբավը և հավատալով, որ դրանք Աստծո զորություններն են, իր սուրհանդակների միջոցով նամակ-խնդրագիր է ուղարկում Երուսաղեմ՝ Փրկչին, որպեսզի նա գա և բժշկի իրեն (շուրջ 7 տարի թագավորը բորոտ էր): Աբգարն արժանացել է Հիսուսի պատասխանին, որտեղ Փրկիչն ասել է, որ իր աշակերտներից մեկին կուղարկի, ով կգա «կբժշկի և կյանք կշնորհի քեզ և քեզ հետ եղողներին»: Քրիստոսի համբարձվելուց հետո Թովմաս առաքյալը Եղեսիա է ուղարկել Թադեոս առաքյալին, ով բուժել է Աբգարին, ինչպես և քաղաքի բոլոր հիվանդներին (տե՛ս. Նոր Կտակարան, «Հոգեգալուստ», «Գործք առաքելոց»-ի 2.1-13): Աբգար թագավորի նամակի բնօրինակը գտնվում է Վատիկանում, Հռոմի Պապի անձնական հավաքածուում: Վերջերս, Թուրքիայի տարածքում գտնվող Շանըրֆա (Ուրֆա, Եղեսիա) քաղաքում, շուրջ 4500<sup>2</sup> մետր տարածքում իրականացված հնագիտական պեղումների արդյունքում հայտնաբերվել է Աբգարին և նրա ընտանիքին պատկանող գերեզմանը, ինչպես նաև ասորերեն գրությամբ խճանկար («Արմենարես», 2016, հուլիսի 15):



ապա բառացի թարգմանելով՝ շարադրել իր աշխատության մեջ<sup>78</sup>: Նույնը վկայում է և Մովսես Խորենացին<sup>79</sup>: Արգար թագավորը Փրկչին ուղղված նամակում նրան դիմել է «Աստծո Որդի», ապա իր սուրհանդակ Անանին (Անանիա) խնդրել պատկերել Հիսուսի դեմքը: Տիրոջից ճառագող հզոր լույսը խանգարել է , և Անանը չի կարողացել նրան նկարի, այդ ժամանակ Հիսուսը լվացվել է և դաստառակը հայեցրել երեսին, որի վրա էլ դրոշմվել է Փրկչի պատկերը: Նշենք, որ վաղ միջնադարյան պատկերագիտության մեջ Քրիստոսը հաճախ պատկերվել է երկձայր կամ եռաձայր սրված մորուքով (թրջված մորուք), նախահիմք ունենալով հենց վարչամակի վրա արտացոլված Փրկչի անձեռակերտ դիմանկարը<sup>80</sup>:

Այդ մասունքը Եդեսիայում է պահվել մինչև X դ. կեսը, երբ բյուզանդական բանակի նշանավոր զորավար, կատեպան<sup>81</sup> **Հովհան Կուրկուասը** (Johann Kourkouas), նույն ինքը՝ **հայկազուն Գուրգենը**<sup>82</sup>, որը 944-ին Փրկչի պատկերով անձեռակերտ Դաստառակը Եդեսիայից անձամբ փոխադրել է Կ. Պոլիս: Ինչպես հայկազուն Դավինոն (San Davino Armeno), այնպես էլ Հովհան Գուրգենը (Կուրկուաս) XI դ. դասվել է կաթոլիկ եկեղեցու սրբերի շարքին<sup>83</sup>: XIV դ. թուրքական ճնշումներից դրդված Բյուզանդիայի կայսեր Հովհաննես V Պալեոլոգոսը ռազմական օգնություն խնդրեց Ջենովայի Հանրապետությունից, և 1362 թ., ջենովական ռազմական ուժերի

<sup>78</sup> Տե՛ս. Евсевий Кесарийский, Церковная история, Книга I, гл. 13; 6-21.

<sup>79</sup> Տե՛ս. Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, Գիրք Բ, Գլուխ Ժ; ԻԹ; ԼԱ; ԼԳ; ԼԵ:

<sup>80</sup> Արձաթյա և ոսկեզօծ դրվագի մեջ ամփոփված այդ սրբապատկերը քրիստոնյա Արևելքի պատկերագիտության մեջ դարձավ նախաձև, մինչդեռ քրիստոնյա Արևմուտքի համար Տիրոջ դիմանկարի սկզբնօրինակ ընդունվեց «Վերոնիկայի վարչամակը» (տե՛ս. ծանոթագրություն N 75):

<sup>81</sup> Կատեպան (հուն. κατεπάνω)՝ բանակի (զինվորական ստորաբաժանման) առաջնորդ և հրամանատար, որի ձեռքում քաղաքացիական և ռազմական ողջ իշխանությունն է: Առհասարակ, Բյուզանդական սահմանային զորամասը հիմնականում բաղկացած էր հայերից և այն այդպես էլ կոչվում էր՝ Numerus Armeniorum (տե՛ս. Balard M., Ducellier A., LesArmenies en Italie buizanrine (VIe-XIe siècle) // Migrations et diasporas mediterraneennes: Xe-XVIe siècles. – Publications de la Sorbonna, 2002 – Vol. 19, – P.34).

<sup>82</sup> Գուրգենը սերվում էր Բյուզանդիայում շատ հայտնի և հարուստ Հովհաննես-Գուրգենների (Կուրկուասներ) հայկազուն տոհմից, որը Բյուզանդիային տվել է անվանի զորավարներ և ռազմական գործիչներ: Գուրգենի (900-946 թթ.) ռազմական հաջողություններն Արևելքում վերջնակետի բերեցին բյուզանդա-արաբական ընդհարումները: Գուրգենն իր հայ գնդերով 934-ին նվաճեց Մելիտենեն (Մալաթիա – Մ.Տ.), այնուհետև, օգնության հասնելով Հայոց Աբաս թագավորին (930-954 թթ.), որ նստում էր Կարսում, անցավ Բասենը, Դվինը, Ախալաբը, Բաղեղը՝ այդ քաղաքների մզկիթների վրա խաչ բարձրացնելով: Ավիրելով Տիգրանակերտը, հասել է Եդեսիա, արաբներին խոստացել քաղաքը մեկ պայմանի դիմաց՝ որ Քրիստոսի Դաստառակն իրեն հանձնեն: Արաբներն ուրախացել են այդքան թեթև պայմանի վրա և Դաստառակն ուղարկել են Գուրգենին (տե՛ս. Տէր-Սահակեան Կ., Հայ կայսերք Բյուզանդիոն, Վենետիկ, Ս. Ղազար, 1927, էջ 67-75):

<sup>83</sup> Breve compendio della vita emorte de S. Pavino Armeno, Il corpo glorioso del gvale se riposa Nell'insingne chiesa di S. Michele, IN LVCCA, Per Basldatlar del Giudice 1646, p. 35-139:

հրամանատար, կապիտան Լեոնարդո Մոնտալդոյի հսկողությամբ Դաստառակը, այլ քրիստոնյա սուրբ նշխարների հետ տեղափոխվեց Ջենովա<sup>84</sup>:

Հայկազուն սրբերի, ինչպես նաև հին հայկական ձեռագրերի հավաքագրման, հաշվառման և ուսումնասիրման եռամյա աշխատանքները (1850-1853) մոտենում էին ավարտին: Ջենովայից վերադառնալով Սուրբ Ղազար, Հայր Ալիշանի վերջին այցելությունները եղան Պավիայի և Միլանի մատենադարանները, որտեղ, գտնելով մի քանի հայ գրչագրեր՝ նա կարևոր կտորները կրկօրինակեց. 1853-ի մայիսի 3-ին մեծ հայրենասերն արդեն Վենետիկում էր:

Այսուհանդերձ, Հայր Ալիշանը կապրի ավելի հանդարտ և նստակյաց, իրեն ամբողջովին նվիրելով գործին. նրա բեղուն գրիչը դեռ կստեղծի հայագիտական անգին կոթողներ՝ մինչև կյանքի վերջին շունչը կծառայի հայրենիքին, բայց այդպես էլ Հայկազունների երկիրը չի տեսնի: Մի առիթով վանքի քահանաներին ասել էր. «Սիմեոն Ծերունիին պես պիտի ապրիմ ու պիտի սպասեմ...»<sup>85</sup>: Իր ողջ հոգով և հավատքով լի սպասում էր Մեսիայի գալուն. երգեց, աշխատեց և ապրեց, Փրկչին տեսնելու տենչով հալվեցավ, մաշվեցավ, սպառեց և ծերացավ: Հայր Ալիշանի ողջ կյանքը ճգնության խնկարան է և դպրության թանգարան: Իր սրտի և գրչի համար առաջնորդ առնելով Պարթևին, Մաշտոցին, Խորենացուն, Ծնորհալուն, Նարեկացուն, մեծ մատենագիր աստվածաբան ու հայկաբան հայրենագետ Ալիշանը, հոգով հոգեկից, մտքով փառակից և վարքով մաքրագույն՝ ինքն էլ դարձավ Հայկազուն Սուրբ:

## Վերջաբան

Հոգվածում անդրադարձել ենք միայն այն Հայկազուն սրբերին, որոնց մասն հիշատակել է Հայր Ալիշանը: Բնականաբար, այդ ցուցակը թերի է, և ինչպես նշում է ականավոր գրող Կոստան Զարյանը, միայն Իտալիայում հայերը կառուցել են 34 եկեղեցի և ունեցել են 11 տոնելի սուրբ<sup>86</sup>: Կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների կողմից հիշատակվող և տոնելի՝ ծագումով հայ սրբերի կյանքն ու գործքը դեռ ուսումնասիրման կարիք ունի:

<sup>84</sup> Լեոնարդո Մոնտալդոն (1319-1384) քաղաքական և ռազմական խոշոր գործիչ էր, որը հետագայում ընտրվեց Ջենովայի դոժ (1383-1384): Կ. Պոլսից բերված բոլոր մասունքները նա հանձնեց Սբ. Լավրենտիոս եկեղեցուն, բացի Դաստառակից, որը շուրջ 20 տարի պահել էր իր մոտ: Ժանտափստի համաճարագը չխնայեց Լ. Մոնտալդոյին և մահվան մահիճին նա Դաստառակը հանձնեց Սբ. Բարդուղեմիոս հայկական եկեղեցուն, որը դեռ փոքրուց հաճախել էր և շատ սիրել (տե՛ս. Buonadonna S., Mercenaro M., Rosso doge. I dogi delle Repubblica di Genovadal 1139 al 1797, Genova, De Ferrari Editori, 2007):

<sup>85</sup> Տե՛ս. Երեմեան Ա., նշվ. աշխ., էջ 194:

<sup>86</sup> Տե՛ս. Զարյան Կ., «Նավատոմար», «Լեոնարդո դա Վինչին և Հայաստանը» // Հոգվածներ, էսսեներ, օրագրեր, ճամփորդական նյութեր, Երևան, 1999:

## Օգտագործված գրականության ցանկ

1. Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 1, Երևան, 1961:
2. Ալիշան Ղ., Սիսական, Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 460:
3. Ալիշան Ղ., Գրական ժառանգություն, նամակներ, հ. 5, «Ակադեմիա» հրատ., Երևան, 1969:
4. Ալիշան Ղ., Հայոց երգք ոսմկական, Վենետիկ, Ս. Ղազար, 1852:
5. Ալիշան Ղ., Արշալույս քրիստոնեության հայոց, Վենետիկ, Ս. Ղազար, 1920:
6. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. 1 (Ե., 1942), հ. 2 (Ե., 1944), հ. 3 (Ե., 1946), հ. 4 (Ե., 1948), հ. 5 (Ե., 1962):
7. «Անիվ», журнал «Анив», «Тайно святого лика», М., 09,2008, N 5 [14]:
8. Առաքելյան Հ., Միլտոն. նրա կյանքը և գրական գործունեությունը, Թիֆլիս, 1950:
9. Ասմարյան Հ., Ղևոնդ Ալիշանի ճանապարհորդական նոթերից, «Լրաբեր», 2003, N 2 (127):
10. Աստուածաշունչ:
11. «Բազմավէպ», Վենետիկ, Ս. Ղազար, 1850, N 18:
12. Դավթյան Ռ., Սամուել Մուրատյանը և նրա անվան վարժարանը // Սփյուռքահայ կրթական օջախներ և գործիչներ, Լրաբեր, 1990, N 9:
13. Երեմեան Ս., Կենսագրություն Հ.Ղ.Ս. Ալիշան Վարդապետի, Վենետիկ, Ս. Ղազար, 1902:
14. Զարյան Կ., «Նավատոմար», «Լեոնարդո դա Վինչին և Հայաստանը» // Հոդվածներ, էսսեներ, օրագրեր, ճամփորդական նյութեր, Երևան, 1999:
15. Թեոդորյան Սարգիս, Պատմություն Մուրատեան և հայկազեան վարժարանաց, հ. 2, Փարիզ, 1886:
16. Թորգոմեան Վ., Հիշատակ մը Ամստերդամի հայ գաղթականության, «Հանդէս ամսօրյա», Վիեննա, 1899, N 1:
17. Լեո, Երկեր, հ. 1, Երևան, 1966:
18. Հայազգի սուրբեր, Շնորհք արքիեպիսկոպոս Գալուստեան, «Գանձասար» մատենաշար, Երևան, 1997:
19. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2 (Երևան, 1988); հ. 4, (Երևան, 1998):
20. Հատինյան Ա., Սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետ Անտիոքցի, «Էջմիածին», 1977, N 12:
21. «Մասիս», 1874, N 1490-1496; 1498-1500, Կ. Պոլիս:

22. Մեսրոպ վրդ. Ուղուրլեան, Պատմութիւն հայ գրականութեան և Լիվոնոս քաղաքում նրանց եկեղեցու կառուցման մասին, Վենետիկ, Ս. Ղազար, 1891:
23. Մխիթարյան Աբ., Պատմութիւն ի ժողովոյ Հայաստանեաց եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874:
24. Մովսէս Խորենացի, Հայոց Պատմություն:
25. Մուրատեան Վարժարան, Վենետիկ, Ս. Ղազար, 1975:
26. Նոր Կտակարան:
27. Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց: Ի սկզբանէ աշխարհի մինչև ցամ Տեառն 1874; հ. Բ, Վենետիկ, Ս. Ղազար, 1785:
28. Չամչեանց Հ., Միքայէլ վրդ., Պատմութիւն Հայոց, գիրք Ա, Վենետիկ, Ս. Ղազար, 1784:
29. Սարգիս Յարութիւնեան, Ղևոնդ Ալիշանը եւ հայոց երգերն ու հավատալիքները // «Բազմավէպ», 1-4, Վենետիկ, Ս. Ղազար, 2001:
30. Սարգսյան Հ., Հայկական հարսանեկան մեղալներ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», Երևան, 1974, N 7:
31. Սարուխան Ա., Հոլանդիան և հայերը, ԺՁ-ԺԹ (XVI-XIX) դարերում, «Հանդէս ամսօրյա», 1928, Վենետիկ, N 9-10:
32. Ստեփանյան Հ., Հայերը դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմում, մաս VIII // [www.diplomat.am/](http://www.diplomat.am/) 22.10.2013:
33. Վահան Քոչար, Քրիստոսի պատկերով թաշկինակը կամ դաստառակ, «Ազգ» օրաթերթ, N 29, 29-07-2016:
34. Տէր-Սահակեան Կ., Հայ կայսերք Բյուզանդիոն, Վենետիկ, Ս. Ղազար, 1927:
35. Փափազեանց Իգ., Պատմութիւն եկեղեցական, Ս. Ղազար, Վենետիկ, 1848:
36. Balard M., Ducellier A., Les Armenies en Italie byzantine (VIe-XIe siècle) // Migrations et diasporas mediterraneennes: Xe-XVIe siècles. – Publications de la Sorbonna, 2002 – Vol. 19.
37. Breve compendio della vita emorte de S. Pavino Armeno, Il corpo glorioso del gvale se riposa Nell'insingne chiesa di S. Michele, IN LVCCA, Per Basldatlar del Giudice 1646.
38. Buonadonna S., Mercenaro M., Rosso doge. I dogi delle Repubblica di Genova dal 1139 al 1797, Genova, De Ferrari Editori, 2007:
39. G. van der Meer. Vier Armenische Penningen Nieuws, 1961, N 3.
40. Gerard van der Loon. Beschrijving van Nederlandsche Historie Pennengen, Amsterdam, 1848.
41. James R. Russell. Zoroastrianism in Armenia – Harvard University, 1987.
42. Rapport Belgique – Rapport sur une mission scientifique en Belgique, Hollande, Danemark et Suède, par F. Macrel, Paris, 1924:

43. The book of saints: A dictionary of persons canonized or beatified by Catholic Church. New York; Thomas Y. Crowell, Benedictine Monks of St. Augustine Abbey, Ramsgate, 1947.
44. Ахвердян С., Сардарян Р., Мануэль Каджуні – армянский пропагандист естественных наук XIX в., «Տեղեկագիր» (Ֆիզիկա), ՀՍՍՀ ԳԱ, 1977, N 12.
45. Берти Дж. (Верти Джузеппе), Демократы и социалисты в период Рисорджименто, пер. с итал., М., изд. «Прогресс», 1965.
46. Буров А.А., Избранные жития святых в Европейских землях просиявших. Москва, 2005-2015.
47. Византийский словарь, т. 1 // Ред. К.А. Филатова, СПб., «Амфора», 2011.
48. Водовозов В.В., Революции 1848 г., ЭСБЕ (Энциклопедический словарь Брокгауза и Ефрона в 86-и томах), т. XXVI, Спб, 1906.
49. Евсевий Кесарийский, Церковная история, Книга I, гл. 13; 6-21.
50. Иаков Ворагинский, «Золотая легенда», глава LXVIII, Об обретении Святого Креста.
51. Саркисян Г., Армянские медали, изготовленные в Голландии, АН АрмССР, «Вестник», 1980, N 3 (65).
52. Корнелий Тацит, Анналы, Книга XII, изд. «Ладомир», М., 1993.
53. Халпахчян О., Средневековое зодчество Армении и его значение в истории мировой архитектуры // Историко-филологический журнал АН АрмССР, 1968, N 4